# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ու Մ

«07» հուլիսի 2026թ. N ՄՈ/391-Ա

ք. Արմավիր

**«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Գ.ՆԺԴԵՀԻ ԱՆՎԱՆ N8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի հուլիսի 3-ի ՄՈ/380-Ա որոշումը՝ «Վաղարշապատի Գ. Նժդեհի անվան N8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ա. Հակոբյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Վաղարշապատի Գ. Նժդեհի անվան N8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Շուշանիկ Խաչատրյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և

արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ (Ա. Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 2509720032 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ